

**ՀՀ-ՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՐԱ ՔԱՈՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՔԱՈՅԱՆ

Հոդվածում ներկայացվել են ՀՀ-ում թվային տեխնոլոգիական ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների անցումային փորձարարական հարթակի (Sandbox) ներդրման անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրներն ու լուծումները: Ֆինտեխի (Fintech) շատ տարողունակ և լայն մեկնաբանությունների հիման վրա առաջարկվել է այն բնութագրել հայտանիշների համախմբով՝ որպես բարդ կատեգորիա:

Առաջարկվել են թվային տեխնոլոգիական ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների անցումային փորձարարական հարթակը կանոնակարգող իրավական ակտի կառուցվածքը և դրա առանցքային բաղադրիչները, հատկապես՝ ա) «անցումային փորձարարական հարթակի» նպատակները, բ) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման նպատակով փորձարկելու և գործարկելու կառուցակարգերը, գ) կարգավորման գործելակարգի կիրարկման չափորոշիչները, դ) ֆինտեխ պրոդուկտներն ու ծառայությունները շահառու հաճախորդներին մատուցելու կարգը, ե) ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների շարքում ընդգրկվելու համար կազմակերպական և տեխնիկական պահանջները, զ) փորձարկվող թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման հաշվետվությունների կանոնակարգը, է) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևաչափը: Կարգավորող «Անցումային փորձարարական հարթակի» ներդրումը կնպաստի նվազեցնելու սպասվող կարգավորիչ անորոշությունները և պարզաբանելու կարգավորող ու վերահսկիչ գործառույթների կիրարկման խնդիրները:

Բանալի բառեր – *ֆինտեխ, թվային ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների իրավական կարգավորում, «անցումային փորձարարական հարթակ» (Sandbox), ֆինտեխ կարգավորիչ գործելակարգեր, կարգավորման տեխնոլոգիաները (RegTech), վերահսկողական տեխնոլոգիաները (SupTech), ֆինանսների ապակենտրոնացված կառավարման ձևաչափը (DeFi)*

Ներածություն

Ֆինտեխի (Fintech) բառացի նշանակում է «ֆինանսներ» գումարած «տեխնոլոգիաներ»: Այն մասնագիտական գրականության մեջ ունի

շատ տարողունակ և լայն մեկնաբանություններ¹: Ուստի այն՝ որպես բարդ կատեգորիա, նպատակահարմար է բնութագրել հայտանիշների համախմբով, որոնցում հարկ է առանձնացնել՝

- ✓ նորարարական գործընթացների արդյունքով ձևավորվող ծառայություններն ու պրոդուկտները,
- ✓ նոր արժեք և բիզնես կայուն մոդելներ ստեղծելու կարողությունը,
- ✓ ֆինանսների ապակենտրոնացված կազմակերպման և կառավարման ձևաչափը (DeFi),
- ✓ տեղեկատվության դրամայնացման կարողությունը,
- ✓ նորարարության, հաճախորդների փորձի (վարքագծի) յուրացման և 24/7 գործելակարգի առերևույթ դրսևորումները,
- ✓ ակտիվ հաճախորդների ներառականություն ապահովելու կարողությունը,
- ✓ դրսևորման ձևաչափը արտահայտվում է ֆինանսական պրոդուկտի, ֆինանսական գործակալության, ինչպես նաև տեխնոլոգիական ֆինանսական կազմակերպության ձևով (վերջինս դասական ֆինանսական միջնորդ չէ):

Ֆինտեխը ունակ է նաև փոխակերպելու կայացած ինստիտուտները, մասնավորապես՝ ֆինանսական կարգավորումն ու վերահսկողությունը՝ նպաստելով կարգավորման տեխնոլոգիաների (RegTech) և վերահսկողական տեխնոլոգիաների (SupTech) ի հայտ գալուն:

Արագ տեմպերով իրականացվող թվայնացումը և ֆինանսական ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրումը վերջին տարիներին վերափոխել են ֆինանսական ծառայությունների ամբողջ համայնապատկերը և լանդշաֆտը: Դրանք մարտահրավեր են նետել կարգավորող ինստիտուցիոնալ մարմիններին, որոնք, արձագանքելով դրան, ընդունել են ֆինտեխի խրախուսմանը համարժեք կարգավորող նախաձեռնություններ՝ միաժամանակ դրանցում ներառելով ռիսկերի զսպման կանոնակարգումներ:

Թվային տեխնոլոգիական զարգացումները, նորարարական պրոդուկտների չկարգավորվող տարածումը հղի են մտահոգություններով և ռիսկերով, ինչպիսիք են մրցակցային հավասար պայմանների խեղաթյուրումը և մեծ թվով սպառողների շահերի պաշտպանության ու ֆինանսական կայունության խաթարումը:

¹ Տե՛ս **Jorge Tello-Gamarra, Diogo Campos-Teixeira, André Andrade Longaray, João Reis and Martin Hernani-Merino**, Fintechs and Institutions: A Systematic Literature Review and Future Research Agenda, <https://www.mdpi.com/0718-1876/17/2/38> ; **Liudmila Zavolokina, Mateusz Dolata, Gerhard Schwabe**, FinTech – What’s in a Name? University of Zurich, https://www.researchgate.net/publication/318268448_FinTech_-_What's_in_a_Name: **Tadiwanashe Muganyi , Linnan Yan , Yingkai Yin , Huaping Sun, Xiangbin Gong and Farhad Taghizadeh Hesary**, Fintech, regtech, and financial development: evidence from China https://web.archive.org/web/20220421235443id_/https://jfinswufe.springeropen.com/track/pdf/10.1186/s40854-021-00313-6.pdf

Միջազգային պրակտիկայում թվային տեխնոլոգիական ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների կարգավորման նպատակով ներդրվել ու գործարկվել են փորձարարական հարթակներ (անգլերեն՝ «Sandbox», ռուսերեն՝ «Регулятивная песочница»), որոնք ունեն ընդհանուր չափորոշիչներ և բնութագրիչներ: Դրանք են՝ պրոդուկտների և ծառայությունների նորարարական բնույթը, գործող օրենսդրական կարգավորման սահմանափակումները և կամ բացակայությունը: Վերջիններս խոչընդոտում են նորարարության իրականացումը՝ մի կողմից զրկելով սպառողներին առավելություններից և մյուս կողմից՝ հարուցելով անվտանգային տարբեր խնդիրներ:

Փորձարարական հարթակը՝ «Sandbox»-ը, համարվում է ֆինտեխ նորարարությունների ազդեցությունները փորձարկելու և ուսումնասիրելու հարմար միջավայր: Առաջին անգամ այն գործարկվել է 2015 թ. Մեծ Բրիտանիայում: Այդ երկրի ֆինանսական ոլորտը կարգավորող մարմինը (FCA) այն բնորոշել է որպես «անվտանգ տարածք, որտեղ բիզնեսը կարող է փորձարկել նորարարական պրոդուկտները, ծառայությունները, բիզնես մոդելները և մատուցման մեխանիզմները՝ առանց անմիջապես ներգրավելու դրանք այդ գործունեության բոլոր կարգավորիչ նորմերի տակ»²: Ըստ այդ մարմնի՝ փորձարարական հարթակը ունի երեք հիմնական նպատակ. 1) կրճատել շուկա մուտք գործելու ժամանակը, 2) բարելավել ֆինանսական հասանելիությունը և 3) խրախուսել նորարարությունները:

«Sandbox»-ը արդեն կիրառվում է շուրջ 60 երկրներում՝ հիմնականում երկու ձևաչափով՝ ա) ֆինանսական ոլորտի հատուկ անցումային փորձարարական կանոնակարգող հարթակ («Sandbox») և բ) առավել լայն շրջանակով հարթակ, ներառյալ ֆինանսական ոլորտը: Առաջինի օրինակ է Ջամայկայի կենտրոնական բանկի կարգավորվող հարթակը³, իսկ երկրորդինի՝ Ավստրալիայի կառավարության 2020 թ. սեպտեմբերի 1-ից ներմուծած «Sandbox»-ի ընդլայնված կարգավորիչ սխեման⁴: Վերջինս բոլոր անձանց թույլ է տալիս փորձարկել նորարարական ֆինանսական որոշակի ծառայություններ՝ առանց նախապես ստանալու Ավստրալիայի ֆինանսական ծառայությունների (AFS) մարմնի լիցենզիան:

Հաշվի առնելով ՀՀ-ում գոյություն ունեցող ֆինտեխ էկոհամակարգի հասունության մակարդակը, ֆինտեխի զարգացման առաջնահերթությունը և հիմնվելով միջազգային փորձի վրա՝ առաջարկվում է Հա-

² Տե՛ս **Douglas W. Arner, Janos Nathan Barberis, Ross Buckley**, FinTech and RegTech in a Nutshell, and the Future in a Sandbox, էջ 22-23, <https://www.cfainstitute.org/-/media/documents/article/af-brief/rfbr-v3-n4-1.pdf>

³ Տե՛ս FINTECH REGULATORY SANDBOX GUIDELINES **Bank of Jamaica**, 2 March 2020, https://www.boj.org.jm/uploads/news/bank_of_jamaica_fintech_regulatory_sandbox_guidelines_2_march_2020.pdf

⁴ Տե՛ս **ASIC**, Enhanced regulatory sandbox, <https://asic.gov.au/for-business/innovationhub/enhanced-regulatory-sandbox/>

յաստանում ներդնել ֆինտեխ ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման կանոնակարգում ըստ «Անցումային փորձարարական հարթակի» (այսուհետև՝ նաև հարթակ) ձևաչափի, որը կընդգրկի ֆինանսական ոլորտը:

Դա մեզ մոտ առավել դյուրին կստացվի, քանի որ, ի տարբերություն շատ երկրների, որտեղ առկա են ֆինանսական ոլորտը կարգավորող տարբեր մարմիններ, ՀՀ-ում դրա միասնական մեզակարգավորողն է ՀՀ կենտրոնական բանկը (2005 թ. օրենքով), և ֆինանսական ծառայությունների միջգերատեսչական համակարգման խնդիր չկա: Նման փորձ առկա է նաև Վրաստանում⁵, Հունգարիայում, Ղրղզստանում, որտեղ կարգավորող փորձարարական հարթակի ձևաչափը կիրառվում է միայն ֆինտեխի համար, և այն կարգավորվում է ազգային բանկերի կողմից:

ՌԴ-ում փորձարարական ռեժիմները նախատեսվում են գործունեության տարբեր ոլորտներում, ուստի դրանք կառավարում և կարգավորում են տվյալ ոլորտը կարգավորող տարբեր մարմիններ՝ կախված թվային տեխնոլոգիական նորարարության բնույթից: Ֆինտեխ նորարարությունները գործարկվում և կարգավորվում են բացառապես Ռուսաստանի բանկի «Անցումային փորձարարական հարթակի» միջոցով: Մինչդեռ գործունեության այլ ոլորտների համար նախատեսված «անցումային փորձարարական հարթակները» կարգավորում են ճյուղային գերատեսչությունները⁶:

ՀՀ-ում «Անցումային փորձարարական հարթակի» ներդրման գործընթացի կազմակերպական և իրավական ապահովումը:

Իրավական առումով «Անցումային փորձարարական հարթակի» ինստիտուտը ՀՀ-ում կարող է սահմանվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Նպատակահարմար է ընդունել «ՀՀ-ում բանկերի, ֆինանսական և S2S կազմակերպությունների կողմից թվային տեխնոլոգիական ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման անցումային դրույթներ» անվանումով կանոնակարգ:

Կանոնակարգի կառուցվածքը պետք է ներառի առանցքային հետևյալ բաժինները. 1) «Անցումային փորձարարական հարթակի» նպատակները, 2) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման նպատակով փորձարկման (թեստավորման) և գործարկման կառուցակարգերը, 3) կարգավորման գործելակարգի կիրարկման չափորոշիչները, 4) ֆինտեխ պրոդուկտներն ու ծառայությունները շահառու հաճախորդներին մատուցելու կարգը, 5) ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների շարքում

⁵ Տե՛ս NBG, Regulatory laboratory, <https://nbg.gov.ge/en/page/regulatory-laboratory>

⁶ Տե՛ս Vladislav Makarov, Experimental legal regimes (regulatory sandboxes): Russian and foreign practices Volgograd State University, Russia, <https://ojs.uniquindio.edu.co › article › download>

ընդգրկվելու համար կազմակերպական և տեխնիկական պահանջները, 6) փորձարկվող թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման հաշվետվությունների կանոնակարգը, 7) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը: Նման նորմերի անհրաժեշտության մասին են վկայում տարբեր երկրներում «Անցումային փորձարարական հարթակների» վերաբերյալ մասնագիտական հրապարակումները, որոնցում ներկայացված են հայտավորումը, հայտի փոփոխման կամ վերանայման հնարավորությունը, փորձարկման կարգավորումները, մոնիտորինգը և արդյունավետության գնահատումը, փորձարկման ավարտի արձանագրումը⁷:

Առաջարկվող կանոնակարգումը, ըստ անվանման, ներառում է ֆինտեխ ոլորտում բանկերի և ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև տեղեկատվական հեռահաղորդակցության տեխնոլոգիական (ՏՀՏ) կազմակերպությունների՝ ֆինտեխ ծառայություններ և պրոդուկտներ մատուցելու նախաձեռնությունները: Կանոնակարգման առանցքային բաղադրիչը «Անցումային փորձարարական հարթակի» գործառույթներն են: Հարթակի արդյունավետության համար խիստ կարևոր է նրա նպատակների արձանագրումը⁸: Որպես այդպիսին հարկ է սահմանել.

ա) արագ զարգացող թվային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված նորարարական թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների փորձարկում՝ թույլ չտալով ՀՀ օրենսդրության խախտումների և համակարգային հնարավոր ռիսկերի առաջացում, վերջնական նպատակ ունենալ՝ դրանց կարգավորումը համապատասխանեցնելու ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական պահանջներին,

բ) նորարարական թվային ֆինանսական ծառայությունների հնարավոր ռիսկերի վերլուծություն ու գնահատում և դրանց նվազեցմանն ու կանխարգելմանը ուղղված համարժեք մոտեցումների մշակում,

գ) փորձարկվող նորարարական թվային ծառայությունների և պրոդուկտների զարգացումը խթանելու նպատակով ֆինանսական նոր կարգավորիչ պահանջների բացահայտում,

դ) նորարարական թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների ներդրման ու կիրարկման համար օրենսդրական ֆինանսա-

⁷ St' u Global Experiences from Regulatory Sandboxes, WB, էջ 16-24, <https://documents1.worldbank.org/curated/en/912001605241080935/pdf/Global-Experiences-from-Regulatory-Sandboxes.pdf>: **Radostina PARENTI**, Regulatory Sandboxes and Innovation Hubs for FinTech. Impact on innovation, financial stability and supervisory convergence, European Parliament, Policy Department for Economic, Scientific and Quality of Life Policies, էջ 28-42, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2020/652752/IPOL_STU\(2020\)652752_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2020/652752/IPOL_STU(2020)652752_EN.pdf)

⁸ St' u **Ivo Jenik and Schan Duff** HOW TO BUILD A REGULATORY SANDBOX, A Practical Guide for Policy Makers, September 2020, էջ 4-12, <https://documents1.worldbank.org/curated/en/126281625136122935/pdf/How-to-Build-a-Regulatory-Sandbox-A-Practical-Guide-for-Policy-Makers.pdf>

կան կարգավորումների կայացման նպատակահարմարության որոշում:

Հարթակի արդյունավետ գործարկման համար մյուս կարևոր նախապայմանը թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման նպատակով փորձարկման (թեստավորման) և գործարկման կառուցակարգերն են⁹:

Հարթակում թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորում իրականացնելու համար հայցորդ ընկերությունը (այսուհետև՝ հայցորդ, ի դեմս բանկերի, ֆինանսական և S2S կազմակերպությունների) պետք է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնի՝ ա) դիմում, բ) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման ծրագիրը (այսուհետև՝ նաև Ծրագիր), գ) թվային ֆինանսական ծառայություններ ու պրոդուկտներ մատուցող ընկերության հրապարակային և կամ առանձին շահառուների համար նախատեսված օֆերտայի տեքստի բովանդակությունը:

Թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման Ծրագիրը պետք է պարունակի՝

- ✓ պրոդուկտի կամ ծառայության ոլորտը, տեսակը և նկարագիրը,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության հնարավոր շահառուներին, ըստ անհրաժեշտության դրանց ընդգրկման սահմանափակումները,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության ստեղծման, գործարկման և/կամ շահագործման մեջ ներգրավված գործընկեր կազմակերպությունը (ներքև) և նրան պատվիրակված գործառույթները և կամ համատեղ իրականացվող գործառույթներն ու ըստ գործընկերների դրանց բաժանումը,
 - ✓ գործընկեր կազմակերպության(-ների) ընտրության չափորոշիչները,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության գործարկումից հետո դրա գնահատելի ծավալները,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության հնարավոր ռիսկերի տեսակները, նկարագրությունը և գնահատելի միջակայքը և թույլատրելիության վերին սահմանագիծը,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության թեստավորման պարամետրերը և դրանց մոնիթորինգի ձևաչափերն ու կառուցակարգերը՝ փորձարկող ընկերության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից (ներառյալ օնլայն ձևաչափերը),
 - ✓ սույն կանոնակարգով «ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Client - KYC), «ճանաչիր քո տվյալները» (Know Your Data - KYD) և փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման՝ ՓԼՄ-ի համար նախատեսված գործելակարգերի նախընտրելի համախումբը:
- Ծրագրի կառուցվածքը և առանձնահատկությունները կախված են թվային ֆինանսական պրոդուկտի և ծառայության ոլորտից և ուղղությունից:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 12-20:

Ֆինտեխ ծառայությունները և պրոդուկտները հարթակում ներգրավվելու համար հայցորդի ներկայացրած ծրագիրը պետք է հավանության արժանանա ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Այդ հավանության դեպքում կսահմանվեն դրա իրականացման փուլերն ու ժամկետները, որի ամբողջական ժամկետը չի կարող փոքր լինել 1 ամսից և չի կարող գերազանցել 3 տարին:

Հարթակում մատուցվող ծառայությունների, պրոդուկտների և դրանց մատակարարների նկատմամբ պետք է կիրարկվի վերահսկման ճկուն՝ հարմարեցվող գործելակարգ, այն է՝ ֆինանսական ոլորտի գործող օրենսդրական կարգավորումների կիրառումը իրականացվում է ժամանակավոր՝ փորձնական ընթացակարգով՝ հարմարեցվելով հայցորդի՝ ա) բանկերի, բ) S2S տեխնոլոգիական ընկերությունների, գ) ֆինանսական կազմակերպությունների (ներառյալ՝ ապահովագրական, վարկային և այլ ֆինանսական կազմակերպությունների) առաջարկած և ՀՀ կենտրոնական բանկի հետ համաձայնեցված ֆինտեխ առանձին պրոդուկտների ու ծառայությունների կիրարկման համար սահմանվող փորձարարական կարգավորումներին:

Ֆինտեխ ծառայությունների և պրոդուկտների փորձարարական ճկուն՝ հարմարեցվող կարգավորման գործելակարգը պետք է նախատեսի՝

ա) ծրագրի իրականացման փուլերի տարանջատում և հայցորդ ընկերության կողմից նախանշած միջոցառումների ամրագրում՝ որակական և/կամ քանակական պարամետրերով,

բ) ՀՀ կենտրոնական բանկի հետ համաձայնեցված կարգով հաստատված ծրագրի փոփոխությունների իրականացում:

Հարթակի կարգավորման գործելակարգի կիրարկումը պահանջում է ամրագրել նաև նրա չափորոշիչները: Ճկուն «Անցումային փորձարարական հարթակի» կարգավորման գործելակարգի կիրարկումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից պետք է լինի հայեցողական, մասնավորապես՝ այն հնարավոր է իրականացնել՝

ա) նոր մատուցվող ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների գործառնությունների համար, որոնք գերծ են որևէ կանոնակարգումից,

բ) ՀՀ օրենսդրության շրջանակում՝ կիրառվող կարգավորման որոշակի ընթացակարգերի բացակայության դեպքում,

գ) որոշակի գործունեության և թվային ձևաչափով մոդիֆիկացված ֆինանսական գործառնությունների համար, որոնց նախատիպերի նկատմամբ սահմանված կարգավորող նորմերը (ներառյալ՝ դրանց սահմանվող բացառությունները և կամ որոշակի սահմանափակող շեմերը) չեն դիտարկում այդ գործառնությունների թվային նորարարական մոդիֆիկացված համատեքստը և առանձնահատկությունները,

ե) ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշման համաձայն՝ կարգավորումներին վերաբերող այլ հիմնավոր պատճառներով, մասնավորա-

պես՝ կարգավորող նորմերի հարմարեցումը ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական գործելակերպին, ներառյալ՝ «առարկությունների բացակայության» ընթացակարգի կիրարկման ճշգրտումը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների առաջարկությունները «Անցումային փորձարարական հարթակում» թեստավորման ընդունման չափորոշիչ է ՀՀ-ում ֆինտեխ ծառայությունների զարգացումը՝ ուղղված՝ ա) ֆինանսական շուկայում թվային տեխնոլոգիական ֆինանսական պրոդուկտների հիմքով առողջ մրցակցության ծավալմանը, բ) հաճախորդների համար թվային ֆինանսական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանը, գ) նորարարական հիմքով ծառայությունների տեսականու ընդլայնմանը, դ) թվային ֆինանսական տեխնոլոգիական ծառայությունների ծախսատարության և սակագների նվազեցմանը, ե) ֆինանսական ծառայությունների հատվածում ռիսկերի նվազեցմանը, զ) ոլորտի անվտանգության և կայունության ապահովմանը, է) հայկական ֆինտեխ ծառայությունների մրցունակության մակարդակի բարձրացմանը:

«Անցումային փորձարարական հարթակը» չի ենթադրում կարգավորիչ պահանջների բացակայություն և կամ չկիրառում:

Մասնավորապես՝ այն դեպքում, երբ S2S տեխնոլոգիական ընկերությունը նախատեսում է իրականացնել ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների մատուցում, ապա այն կարող է իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան թույլտվության հիմքով:

Նախքան նման գործունեության իրականացումը S2S տեխնոլոգիական ընկերությունը պետք է ստանա ժամանակավոր, սահմանափակ ֆինտեխ գործառնությունների իրականացման լիցենզիա՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված դյուրին, պարզեցված և կարճ ընթացակարգով:

Բանկերի կողմից ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների ստեղծման և շահագործման պատվիրակում ստացած և կամ գործընկերային մասնակցություն ունեցող S2S ընկերությունները, համաձայն ՀՀ օրենսդրության, գտնվում են ՀՀ կենտրոնական բանկի կարգավորման և վերահսկողության ներքո, և նրանց վրա մասնավորապես պետք է տարածվեն առաջարկվող կանոնակարգի նորմերը:

Բանկերը և լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունները ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների թեստավորման համար՝ որպես հայցորդ ընկերություններ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության դեպքում կստանան թույլտվություն՝ «Անցումային փորձարարական հարթակում» իրականացնելու իրենց կողմից ներկայացված ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների մատուցումն ու փորձարկումը: Հատուկ շեշտվում է թույլտվություն և ոչ թե լիցենզիա, քանի որ լիցենզիան ենթադրում է թղթակցություն օրենսդրության այլ

կարգավորումների և պահանջների հետ, մասնավորապես՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, տուրքի սահմանման և այլնի հետ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից նորարարական թվային ֆինտեխ պրոդուկտները և ծառայությունները հարթակում մատուցելու և թեստավորում անցնելու ընտրության չափորոշիչներ պետք է դիտարկվեն նման պրոդուկտներում՝ «մեծ տվյալների» (Big Data), «արհեստական բանականության» (Artificial Intelligence), «մեքենայական ուսուցման» (Machine Learning), «ամպային հաշվարկների տեխնոլոգիաների» (ներառյալ՝ սերվերները, պահեստավորումը, տվյալների բազաները, վերլուծության ու հետազոտության ծրագրակազմը - Cloud computing technologies), «անփոխարինելի կամ եզակի թվային միավորների» (Non-fungible token NFT), «բլոկչեյն տեխնոլոգիաների» (blockchain technologies), «բլոկչեյնում բաշխված գրանցամատյանների» (Distributed Ledger Technology - DLT), «խելացի գործարքների» (Smart contract), «իրերի համացանցի կամ բանցանցի» (Internet of Things - IoT), «ինտերֆեյսը միացնող՝ ծրագրային սպահովման կցորդի» (Application Programming Interface - API), «կարճ հեռավորության վրա անլար կապի» (Near Field Communication technology NFC), «կենսաչափական թվային տեղեկատվական տեխնոլոգիաների» (Biometrics Digital Information Technology), թվային բաղադրիչների և նմանատիպ գործիքների կիրարկումը:

Վերը նշված թվային բաղադրիչների և գործիքների հետ մեկտեղ՝ թեստավորում անցնելու ընտրության չափորոշիչներ պետք է դիտարկվեն դրանց տարբեր համակցության գործիքակազմով լուծումների արդյունքում ստացվող՝ վճարահաշվարկային սպասարկումների (Billing services), թվային ֆինանսական ակտիվների (Digital financial assets), անձանց և տվյալների նույնականացման և ստուգման (Identification and verification persons and data), գաղտնագրման (cryptography), «ռոբոտացված ռեժիմով ներդրումների» (Robotic stocks and investments), «միահավասարների վարկավորման» (Peer to Peer lending), քրաուդֆանդինգի տարբեր ձևաչափերի (Different type of Crowdfunding) և թվային նորարարական այլ պրոդուկտների կիրարկումը:

Բացի վերը նշվածներից, հայցորդ ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ կարող է համաձայնեցնել «Անցումային փորձարարական հարթակում» թվային այլ բաղադրիչներ և գործիքներ պարունակող նորարարական թվային ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների մատուցումն ու թեստավորումը:

Անցումային փորձարարական հարթակում ֆինտեխ պրոդուկտներն ու ծառայությունները շահառու հաճախորդներին մատուցելու արդյունավետ գործարկումը ենթադրում է որոշակի պահանջների պահպանում: Դրանք հաճախորդներին պետք է մատուցվեն երկու գործելակարգերով.

1) Հաճախորդների գիտությամբ ու համաձայնությամբ՝ նախապես

նրանց իրազեկել բոլոր հնարավոր ռիսկերի մասին (ներառյալ՝ հաճախորդի անձնական տվյալների և առկա և ապագայում ստացված ֆինանսական միջոցների և թվային ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստները):

Գործելակարգը ամրագրվում է շահառու հաճախորդներին ներկայացվող ծառայությունների մատուցման հրապարակային և/կամ առանձին հաճախորդներին տրված օֆերտայում:

2) Հաճախորդների գիտությամբ և համաձայնությամբ՝ նախապես նրանց իրազեկել բոլոր հնարավոր ռիսկերի մասին (ներառյալ՝ հաճախորդի անձնական տվյալների և առկա ու ապագայում ստացված ֆինանսական միջոցների և թվային ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստները) և միաժամանակ վերջիններիս օժտելով փոխհատուցման պահանջի իրավունքով՝ փոխհատուցել կրած կորուստները ամբողջությամբ կամ մասնակի՝ որոշակի շեմից բարձր կամ ցածր:

Գործելակարգը ամրագրվում է շահառու հաճախորդներին ներկայացվող ծառայությունների մատուցման հրապարակային կամ առանձին հաճախորդներին ուղղված օֆերտայում և/կամ վերջիններիս հետ կնքվող պայմանագրում:

Հարթակի գործունակության կարևոր նախապայմաններից է ֆինտեխ պրոդուկտներ և ծառայություններ ընդգրկելու համար սահմանված կազմակերպական և տեխնիկական պահանջները:

«Անցումային փորձարարական հարթակում» ֆինտեխ պրոդուկտներ և ծառայություններ մատուցողները պետք է ՀՀ կենտրոնական բանկի հավանության ներկայացնեն դրանցում կիրարկվող բաց ինտերֆեյսի միացնող՝ կցորդ ծրագրային ապահովման գործիքների («Open API-ների») պարտադիր և հանձնառությամբ ստանձնած պայմանները: Դրանց ստանդարտացված անալոզների առկայության դեպքում նախընտրելի է ստանդարտացված հիմքով «Open API-ների» կիրարկումը:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտները և ծառայությունները պետք է որոշակի ձևաչափով ապահովեն «ճանաչիր քո հաճախորդին» (KYC) և փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման՝ ՓԼԱՖ գործելակարգերի պահանջները՝ ամբողջական և/կամ թեթևացված ընթացակարգով: Դրանց գործարկելիության և աշխատունակության արժանահավատության գնահատումը կիրականացվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Դրանք կարող են չկիրարկվել փոքր և որոշակի ժամանակահատվածում (ամսվա կամ տարվա կտրվածքով) գումարային որոշակի շեմը չզերազանցող գործարքների դեպքում: Համապատասխան գումարային սահմանափակումները կորոշի ՀՀ կենտրոնական բանկը:

«Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer or Client - KYC) և «Ճանաչիր քո տվյալները» (Know Your Data - KYD) կիրառման համար

Ֆինտեխ պրոդուկտ կամ ծառայություն մատուցողը պետք է ներկայացնի ներքոնշյալ գործիքների որոշակի համախումբը, որը կապահովի «ճանաչիր քո հաճախորդին» և «ճանաչիր քո տվյալները» պահանջների կատարումը, դրանց շարքում են.

ա) առցանց միջավայրում «ճանաչիր քո հաճախորդին»-ից օգտվող շահառուի կարգավիճակը ստուգող գործելակարգը կամ ամբողջական համակարգը.

բ) «ճանաչիր քո հաճախորդին» և ՓԼԱՖ-ի ներդրման համապատասխանության էական քայլերը, այդ թվում՝

✓ տվյալների հավաքագրումը, հաճախորդների ստուգումն ու գնահատումը,

✓ տեղեկատվության աղբյուրների բացահայտումը,

✓ հաճախորդի իրավական կարգավիճակի պատշաճ բացահայտումը,

✓ հաճախորդի շարունակական մոնիթորինգը,

✓ «ճանաչիր քո հաճախորդին» տվյալները վերականգնելու կառուցակարգերը,

✓ կարգավորող մարմնի վերահսկման հնարավոր կառուցակարգը:

Ֆինտեխ պրոդուկտներում և ծառայություններում «ամպային հաշվարկների տեխնոլոգիաների» կիրարկման դեպքում «ճանաչիր քո հաճախորդին» և ՓԼԱՖ-ի պահանջները պահպանելու նպատակով դրանք կիրառող հայցողը ընկերությունը պետք է ՀՀ կենտրոնական բանկին ներկայացնի տվյալների բացահայտման, ինչպես նաև դրանց արտահոսքի և կորստի վտանգից խուսափելու համար կիրառվող կանխարգելիչ միջոցները՝ դրանցում կիրառելով ներքոնշյալ գործիքների որոշակի համախումբ՝

✓ տեղեկատվություն ամպային սերվերների տեղաբաշխման վերաբերյալ (տեղաբաշխման երկիրը և տարածաշրջանը),

✓ որակավորված «ամպային տեխնոլոգիաների» մատակարարի (կամ պրովայդերի) ընտրության չափորոշիչները,

✓ տեղեկատվություն որակավորված «ամպային տեխնոլոգիաների» մատակարարի (կամ պրովայդերի) վերաբերյալ,

✓ ամպային միջավայրում զգայուն տվյալների գաղտնագրման գործելակարգը:

Կիրառվող բոլոր գաղտնաբառերի պահպանման գործելակարգերը առավել ապահով վայրում պահպանելու և գաղտնաբառերը փոփոխման ընթացակարգերի համախմբում են՝

✓ բոլոր աշխատակիցների կողմից զգայուն տեղեկատվության (ֆայլերի) հասանելիության թույլտվությունների աստիճանակարգման ընթացակարգը (սահմանված հասանելիության մակարդակները),

✓ վիրուսային վարակիչ ծրագրերին հակազդող գործիքներն ու դրանց կիրարկման ընթացակարգերը,

- ✓ ցանցային գործառնություններին առնչվող սահմանափակումները,
- ✓ համապատասխանության գործելակարգի ապահովումը, ներառյալ՝ պատշաճ իրավական փորձաքննության ընթացակարգը,
- ✓ անընդմեջ մոնիթորինգ իրականացնելու ընթացակարգը:

Հայցորդ ընկերությունը «ճանաչիր քո հաճախորդին» և ՓԼԱՖ-ի խնդիրների գործարկման համար կարող է առաջարկել նաև այլ գործիքներ:

«Ճանաչիր քո հաճախորդին», «ճանաչիր քո տվյալները» և ՓԼԱՖ-ի վերը նշված ու հայցորդի առաջարկած հավելյալ գործիքներով կազմված համախմբի գործարկելիության և աշխատունակության արժանահավատության գնահատումը իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների ճկուն կիրարկումը պայմանավորված է դրանց հատուկ թեստավորման պարամետրերով՝ ներկայացված դրա Ծրագրում: Այդ պարամետրերը որոշվում են յուրաքանչյուր պրոդուկտի համար առանձին և հարմարեցված են այդ գործունեության թեստավորման բնույթին: Մասնավորապես՝ «Անցումային փորձարարական հարթակում» թեստավորվող սուբյեկտները կարող են ենթարկվել սահմանափակումների՝ ըստ սպասարկվող հաճախորդների տեսակների և/կամ դրանց առավելագույն թվաքանակի և/կամ գործարքի ծավալների:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորման ողջ ժամանակահատվածում այն իրականացնող ընկերությունը ակտիվորեն պետք է համագործակցի ՀՀ կենտրոնական բանկի հետ՝ նրան տեղեկացնելով փոխհամաձայնեցված Ծրագրի աշխատանքային պլանում արձանագրված շեղումների և դրանց պատճառների մասին, ինչպես նաև առաջիկայում կանխատեսվող շեղումների մասին:

Հաճախորդների կրած վնասների փոխհատուցման պահանջի իրավունքով իրականացվող թեստավորման դեպքում «Անցումային փորձարարական հարթակում» փորձարկում իրականացնող ընկերությունը նշում է այն ռիսկերը և դրանց ի հայտ գալու պայմանները, որոնց առաջացման դեպքում հաճախորդի կրած վնասները ենթակա կլինեն հատուցման, ինչպես նաև՝ դրանց բացառությունները:

«Անցումային փորձարարական հարթակի» թեստավորման համար նախատեսված երաշխիքների իրականացումը ենթադրում է սպառողների իրազեկումը փոխհատուցման մեխանիզմների և ընթացակարգերի մասին, որը պետք է ներառվի թեստավորող ընկերության հրապարակային կամ առանձին շահառուներին ուղղված օֆերտայում:

Հարթակում ֆինտեխ ծառայությունների և պրոդուկտների փորձարկման արդյունավետության կարևոր բաղադրիչներից է դրա գործընթացի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելը: Ըստ այդմ,

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորումը ենթադրում է հայտատու ընկերության հաստատած ծրագրի ընթացքի մասին հաշվետվությունների ներկայացում ՀՀ կենտրոնական բանկին: Հաշվետվությունների ձևաչափը, բովանդակային ցուցիչները, ժամկետները և պարբերականությունը կսահմանվեն ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ ըստ յուրաքանչյուր փորձարկվող պրոդուկտի կամ ծառայության ուղղվածության բնույթի և առանձնահատկության:

Հաշվետվություններում պետք է ներառվեն մասնավորապես այն ստացող շահառուների շրջանակը, նրանց թվաքանակը, պրոդուկտի կամ ծառայության քանակական և արժեքային ցուցիչները, Ծրագրում նախանշված պարամետրերի շարժը, ի հայտ եկած ռիսկերը, առաջացրած կուրուստները և կամ դրանց վտանգները և փոխհամաձայնեցված կարգով այլ քանակական ու որակական ցուցիչներ:

Հաշվետվությունների ձևաչափի առումով նախընտրելի է իրական ժամանակի ռեժիմով (օնլայն) հաղորդվող տեղեկատվության ձևաչափը, որը կարող է զուգորդվել այլ ձևաչափերի հետ:

Հարթակում թեստավորվող թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման ընթացքը անհրաժեշտ է ամրագրել ստացված արդյունքների եզրակացությունով:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորումը կարող է դադարեցվել նախաձեռնող՝ հայցող ընկերության կողմից, որի դեպքում վերջինս նախապես դրա մասին պետք է ծանուցի ՀՀ կենտրոնական բանկին:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորումը կարող է դադարեցվել ժամանակավոր կամ վերջնականապես ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, այն դեպքում, երբ

ա) իրականացնող ընկերությունը ձախողել է ծրագրով սահմանված պրոդուկտի կամ ծառայության փորձարկման համապատասխանեցված պարամետրերը, և դրա շարունակումը կհանգեցնի շահառու սպառողների վնասների առաջացմանը և կամ դրանց մեծացմանը,

բ) եթե ներկայացված և համաձայնեցված ծրագիրը ձախողվում է՝ հնարավոր շահառուների շրջանում պահանջարկի բացակայության հետևանքով,

գ) պրոդուկտների և ծառայությունների փորձարկման պարամետրերի վերահսկողությունը խնդրահարույց է դարձել ՀՀ կենտրոնական բանկի համար.

դ) փորձարկման համաձայնեցված Ծրագիրը իրականացնող ընկերությունը պատշաճորեն չի համագործակցում ՀՀ կենտրոնական բանկի հետ:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորման դադարեցման հետ մեկտեղ՝ ուժը կորցրած է ճանաչվում նաև S2S ընկերությանը տրամադրված ժամանակավոր և սահմանափակ գործառնությունների համար տրված լիցենզիան:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորումը Ծրագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո գնահատվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Գնահատումը կարող է հանգել հետևյալ եզրակացություններին.

ա) Փորձարկումը չի հասել նախանշված նպատակներին, ըստ այդմ՝ պահանջել է և կամ պահանջում է դրա վաղաժամկետ դադարեցում:

բ) Փորձարկումը չի հասել և/կամ մասնակի է հասել նախանշված նպատակներին և պահանջում է հավելյալ փորձարկում այլ ժամկետով և պայմաններով և/կամ դրանց լրացումով ու ճշգրտումով:

գ) Փորձարկումը հասել է նախանշված նպատակներին և պահանջում է առկա օրենսդրական կարգավորումներում ներմուծել որոշակի լրացումներ կամ փոփոխություններ:

դ) Փորձարկումը հասել է նախանշված նպատակներին և պահանջում է ներդնել լրացուցիչ օրենսդրական կարգավորումներ՝ օրենքի և/կամ ենթաօրենսդրական ակտերի մակարդակով:

Եզրակացություն

Սույն հոդվածում առաջարկվող «անցումային փորձարարական հարթակի» կարգավորումների ներդրումը կխթանի ՀՀ-ում ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների զարգացումը: Այն, ըստ էության, հնարավորություն կընձեռի ձևավորելու փորձարկման միջավայր նորարարական պրոդուկտների, ծառայությունների և/կամ բիզնես մոդելների ներդրման համար: Հարթակի ճկուն և մեղմ թեստավորման հատուկ գործընթացը զուգորդվում է նաև որոշակի երաշխիքներով այն գործարկող բիզնես ընկերության և պոտենցիալ օգտվող շահառուների համար:

Կարգավորող «անցումային փորձարարական հարթակի» կիրարկումը կօգնի նվազեցնելու սպասվող կարգավորիչ անորոշությունները և պարզաբանումներ տալու կարգավորող ու վերահսկիչ գործառնությունների կիրարկման խնդիրներին:

АРА КАРЯН, ВЛАДИМИР КАРЯН – Необходимость внедрения переходной экспериментальной платформы для цифровых технологических финансовых услуг и продуктов в РА. – В статье представлены необходимость, цель, задачи и решения внедрения переходной экспериментальной платформы (регуля-

тивной песочницы) цифровых технологических финансовых услуг и продуктов в РА. Исходя из весьма ёмких и широких трактовок финтех, предложено эту сложную категорию охарактеризовать со сводом характерных критериев.

Предложена структура нормативно-правовой регуляции переходной экспериментальной платформы для цифровых технологических финансовых услуг и продуктов, ее его ключевые компоненты, в т. ч. а) цели переходной экспериментальной платформы, б) механизмы для запуска и тестирования предоставляемых и надзорных цифровых финансовых услуг и продуктов на платформе, в) критерии для реализации процедуры регулирования платформы, г) порядок предоставления финтех продуктов и услуг заинтересованным клиентам на платформе, д) организационно-технические требования для включения финтех продуктов и услуг в процесс тестирования на платформе, е) регламент отчетов о цифровых финансовых услугах и продуктах, тестируемых на платформе, ё) формат заключения по результатам оценки регулирования и надзора цифровых финансовых услуг и продуктов на платформе. Внедрение регулятивной песочницы будет способствовать снижению ожидаемых регуляторных неопределенностей и уточнению вопросов реализации регулирующих и надзорных функций.

Ключевые слова: *финтех, правовое регулирование цифровых финансовых продуктов и услуг, «переходная экспериментальная площадка» (регулятивная песочница), процедуры регулирования финтеха, регулирующие технологии (RegTech), контрольные технологии (SupTech) децентрализованное управление финансами (DeFi)*

ARA KARYAN, VLADIMIR KARYAN – *The Necessity to Introduce a Transitional Experimental Platform for Digital Technology Financial Services and Products in RA.* – The article presents the necessity, goal, tasks, and solutions for the introduction of a transitional experimental platform (regulatory sandbox) of digital technological financial services and products in the Republic of Armenia. Based on very capacious and broad interpretations of fintech, it is proposed to characterize this complex category with a set of characteristic criteria.

The article presents the structure of the regulation of the transitional experimental platform for digital technological financial services and products, and its key components: a) the objectives of the transitional experimental platform, b) mechanisms for launching and testing the provided and supervisory digital financial services and products on platform, c) criteria for implementing the platform regulation procedure, d) the procedure for providing fintech products and services to interested clients on the platform, e) organizational and technical requirements for the inclusion of fintech products and services for testing on the platform, f) regulations for reporting on digital financial services and products tested on the platform, g) the format of the conclusion based on the results of the evaluation of the regulation and supervision of digital financial services and products on the platform. The introduction of a regulatory sandbox will help reduce expected regulatory uncertainties and clarify issues related to the implementation of regulatory and supervisory functions.

Keywords: *fintech, legal regulation of digital financial products and services, "transitional experimental platform" (Sandbox), fintech regulatory procedures, RegTech, SupTech, DeFi*